«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1177-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

____ _____ 2024 թիվ ____-Ն

Հայաստանի հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 1177-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

Հիմք ընդունելով «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագրի շրջանակներում հարկային արտոնություններ տրամադրելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 23-ի «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագիրը, այդ ծրագիրն իրականացնող կազմակերպությունների ցանկը և նրանց կողմից իրականացվող գործարքների ու գործառնությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1177-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրա-ցումները՝

- որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ ենթակետով.

«12) «Դիլիջանի միջազգային դպրոց» ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կողմից 2024 թվականի ընթացքում իրականացվող գործարքների ու գործառնությունների ծրագիրը՝ համաձայն N 12 հավելվածի:».

- որոշումը լրացնել նոր՝ N 12 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո իրականացված (իրականացվող) գործարքների և գործառնությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված

ՀՀ կառավարության 2024 թվականի

_____ ____ N ____-Ն որոշման

Հավելված N 12

ՀՀ կառավարության 2013 թվականի

հոկտեմբերի 23-ի N 1177-Ն որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԴԻԼԻՋԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2024 թվականի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

«Դիս Փրոփերթիս» բարեգործական հիմնադրամ

N	Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ
1	Հողի գնում	տարի	1
2	Անշարժ գույքի գնում	տարի	1
3	Շարժական գույքի գնում	տարի	1
4	Կոմունալ ծառայությունների վճարներ՝ հեռախոսային, ինտերնետային և հեռահաղորդակցության ծառայություններ, ամսավճարներ, գազ, էլ. էներգիա, ջրամատակարարում և այլ ծառայություններ	տարի	1
5	Գրասենյակային և տնտեսական ապրանքների գնում և ծառայություններ	տարի	1
6	Կենցաղային և համակարգչային տեխնիկայի և ծառայությունների ձեռք բերում	տարի	1
7	Անվտանգության համակարգի սարքավորումների և ծառայությունների ձեռքբերում, պահնորդային և այլ ծառայությունների ստացում	տարի	1
8	Մասնագիտական և խորհրդատվական ծառայություններ, տեխնիկական սպասարկում, մոնտաժում,	տարի	1

	ապամոնտաժում, փոխարինում		
9	Մարքեթինգային, գովազդային, դիզայներական ծառայություններ	տարի	1
10	Թարգմանչական, համանման այլ ծառայություններ	տարի	1
11	Տեխնիկական վերահսկում, ծրագրերի կառավարում, կառավարչական և գործառնական բնույթի խորհրդատվություն, շինարարական աշխատանքներ	տարի	1
12	Վարձակալություն	տարի	1
13	Գիշերակացի, հյուրանոցային, սննդի և գործուղման հետ կապված այլ ծառայություններ	տարի	1
14	Նախագծային աշխատանքներ, ինժեներական, տվյալների մշակում, նախագծի կառավարչական և այլ ծառայություններ	տարի	1
15	Բրոքերային և մաքսազերծման ծառայություններ	տարի	1
16	Ինժիներաերկրաբանական, երկրաֆիզիկական հետազոտություններ, փորձաքննական ծառայություններ	տարի	1
17	Գնահատման, միջնորդական ծառայություններ	տարի	1
18	Վառելիք	տարի	10,000լ
19	Շինմոնտաժային աշխատանքներ, այդ թվում՝ նյութեր, հումքեր, ապրանքներ, սարքավորումներ	տարի	1
20	Անդամակցության, լիցենզիայի, կառուցապատման, վարձակալության և այլ իրավունքի ձեռքբերում	տարի	1
21	Տրանսպորտային ծառայություն, բեռների փոխադրում	տարի	1
22	Միջոցառումների կազմակերպում	տարի	1
23	Փորձագիտական, ուսումնական ծառայություններ	տարի	1
24	Տեղեկատվական տեխնոլոգիական ծառայություններ	տարի	1
25	Կամուրջների, ճանապարհների և այլ ենթակառուցվածքների կառուցում, բարելավում, վերանորոգում	տարի	1
26	Մեքենաների, սարքավորումների, տնտեսական գույքի և այլ ապրանքանյութական արժեքների ձեռքբերում և սպասարկում, տեղադրում, վերանորոգում	տարի	1
27	Ազգային պարկի վարձակալություն	տարի	1
28	Կանաչապատման ծառայություն	տարի	1

«Դիլիջանի Միջազգային Դպրոց, Հայաստան» հիմնադրամ

N	Նկարագրություն	Չափման միավոր	Քանակ
1	Շարժական գույքի գնում	տարի	1 հատ
2	Կոմունալ ծառայությունների վճարներ՝ հեռախոսային, ինտերնետային և հեռահաղորդակցության ծառայություններ, ամսավճարներ, գազ, էլեկտրաէներգիա, ջրամատակարարում և այլ ծառայություններ	տարի	1
3	Գրենական պիտույքների, տնտեսական ապրանքների, կահույքի, այլ կրթական միջոցների գնում	տարի	1
4	Կենցաղային և համակարգչային տեխնիկայի ու ծառայությունների ձեռքբերում	տարի	1
5	Անվտանգության համակարգի սարքավորումների ու ծառայությունների ձեռքբերում, պահնորդային և այլ ծառայությունների ստացում	տարի	1
6	Կառույցների, տարածքների շահագործման, մաքրման, պահպանման, վերանորոգման և այլ ծառայությունների ու նյութերի ձեռքբերում	տարի	1
7	Սննդի ձեռքբերում, տրամադրում, սպասարկում	տարի	1
8	Մասնագիտական և խորհրդատվական ծառայություններ	տարի	1
9	Մարքեթինգային, գովազդային, դիզայներական ծառայություններ	տարի	1
10	Թարգմանչական, ինժեներական և համանման այլ ծառայություններ	տարի	1
11	Տեխնիկական վերահսկում, ծրագրերի կառավարում, կառավարչական և գործառնական բնույթի խորհրդատվություն	տարի	1
12	Վարձակալություն՝ շարժական և անշարժ գույքի	տարի	1
13	Գիշերակացի, հյուրանոցային, սննդի և գործուղման հետ կապված այլ ծառայություններ	տարի	1
14	Բրոքերային և մաքսազերծման ծառայություններ	տարի	1
15	Գնահատման, միջնորդական ծառայություններ	տարի	1
16	Վառելիք	տարի	

			43,200 լ
17	Անդամակցության, լիցենզիայի, իրավունքի ձեռքբերում	տարի	1
18	Տրանսպորտային ծառայություն, բեռների փոխադրում	տարի	1
19	Միջոցառումների, ժողովների և այլ հանդիպումների կազմակերպում	տարի	1
20	Փորձագիտական, ուսումնական, անձնակազմի վերապատրաստման ծառայություններ	տարի	1
21	Ապահովագրական ծառայություններ	տարի	1
22	Տեղեկատվական տեխնոլոգիական ծառայություններ	տարի	1
23	Գրքերի, ուսումնական, սպորտային, գիտական, լաբորատոր, տնտեսական, գրասենյակային և այլ նյութերի ու ծառայությունների ձեռքբերում	տարի	1
24	Անձնակազմի ընտրության ծառայություններ	տարի	1
25	Հիմնական միջոցների, նյութական ու ոչ նյութական ակտիվների և այլ ապրանքանյութական արժեքների ձեռքբերում ու սպասարկում, տեղադրում, վերանորոգում	տարի	1